ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 282

07 մարտ 2024թ.

«ԲԱՐԵԼԱՎՈՒՄ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ծաղկաձորի համայնքապետարանի կողմից 02.11.2023թ. հայտարարված «ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/15» ծածկագրով ընթացակարգի 1,2 և 5 չափաբաժինների արդյունքում Ծաղկաձորի համայնքապետարանի (այսուհետ՝ Գնորդ) և «Բարելավում» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 29 նոյեմբեր 2023թ. կնքվել է թիվ «ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-23-15-1» ծածկագրով ապրանքների մատակարարման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագրով սահմանված ապրանքների մատակարարման վերջնաժամկետը սահմանված է եղել 2023թ. դեկտեմբերի 29-ը: Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Բարելավում» ՍՊԸ-ն պարտավոր էր սահմանված ժամկետում մատակարարել 2 հատ դեղորայքի պահարան (1-ին չափաբաժին), 1 հատ բժշկական թախտ (2-րդ չափաբաժին) և 1 հատ նվագարկիչ (5-րդ չափաբաժին): Մասնակցի կողմից սահմանված ժամկետում մատակարարվել է միայն 5-րդ չափաբաժնով նախատեսված 1 հատ նվագարկիչը:

Ծաղկաձորի համայնքապետարանը բազմիցս զգուշացրել է պայմանագրով նախատեսված պարտականությունները կատարելու համար, մասնակցին, իր խնդրանքով տրամադրվել է ողջամիտ ժամկետ ապրանքները մատակարարելու համար,սակայն մինչ օրս 1-ին և 2-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքները չեն մատակարարվել:

Պայմանագրի 2.1.7 և 2.1.7.1 կետերի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի՝

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում,եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որ չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 2 օրից ավելի:

Քաղաքացիական օրենսգրքի 466 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:»

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վաճառողը խախտել է Պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ Գնորդը, հիմք ընդունելով վերը նշված իրավական հիմքերը, թիվ «ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/15-1» ծածկագրով պայմանագիրը համարում է միակողմանի մասնակի լուծված՝ 210000 /երկու հարյուր տասը հազար/ ՀՀ դրամ գումարի չափով:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառվել է ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները, համաձայն որի՝ «պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին.»:

2024թվականի մարտի 06-ին Գնորդը պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը հրապարակել է տեղեկագրում և ուղարկել Վաճառողի էլեկտրոնային փոստին:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) պարբերությամբ և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. «Բարելավում» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (ՀՎՀՀ՝ 02840014) երկու տարի ժամկետով ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն որոշման օրինակը ուղարկել «Բարելավում» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը:

3. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը իրականացնում է Ծաղկաձոր համայնքի ղեկավար Նարեկ Հարությունյանը:

4. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել՝ այն ստանալու պահից հաշված երեսուն օրացուցային օրվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**